ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Իտալիա։ — Իտալիոյ առաջին պաշտօնեայն Քրիսբի այս ամիս բովանդակ երկրին լրագրաց ուշադրութիւնը իր վրայ կեդրոնացուց այլ և այլ պատճառներով։ Նախ և առաջ, երբ Պիզմարք հրաժարեցաւ կամ լաւ ևս պաշտօնանկ եղաւ և իրեն յաջորդեց զօրավարն Քաբրիվի, բարեկամական խուզթեր և փոխադարձ սիրոյ և վստահութեան հեռագիրներ անպակաս եղան այս երկու պաշտօնէից մէջ։ Մինչդեռ այսպէս կը գուշէր զԳերմանիա, լուր առաւ որ Գաղղիոյ հասարակապետութեան Նախագահը պիտի ճանապարհորդէ. և ինքն՝ որ այսչափ տարիներ ատեց զԳաղղիա, այս պարագային մէջ ըստիպուեցաւ պարզապէս պատշաճութեան համար նաւային հատած մ՝ առաքել 'ի Դուլոն՝ ուր Նախագահին պիտի մատուցանէ իտալացի ծովակալն, Ռումպէրդօ թագաւորին ինքնագիր նամակը. այս դէպքը և որոշմունքը շատ մեկնութեանց և օտարոտի բացատրութեանց առիթ եղաւ։ Սակայն երկրորդ դէպք մը հասարակաց կարծիքը և ևս զայրացուց իր անձին դէմ. 'ի Հռովմ յանկարծակի բարձրագոյն հրամանաւ (այս է Քրիսբիի) թաղապետութեան պաշտօնեայք ներկայացան Ֆրանչիֆորդի լրագրոյն և Ֆիկարօի թղթակցաց և կարգացին իրենց վիճիռը՝ որ զիրենք կ՝արտաքսէր Իտալիոյ սահմանէն, իբր սխալ լրատուք։ Գաղղիական մամուլը որ արդէն մեծապէս գրգռեալ էր Քրիսբիի դէմ՝ այս առթիս մէջ յայտնեց իւր արդարացի ատելութիւնը, թէպէտ ոչ միշտ ըստ պատշաճի և արդարադատ բացատրութեամբ, Այս դէպքը յիրաւի աղատն Իտալիոյ շատ պատիւ չբերեր։

Գերմանիա։ — Պիզմարքի անկումէն վերջը ցարդ նոր նշանաւոր դէպք մը չհանդիպեցաւ։ Քաբրիվի բազմաթիւ թէ դիւանագիտական և թէ առանձնական ծանուցագրեր և յայտագրեր հրատարակեց, յորս կը հաստատէ թէ ամենեին նոր փոփոխութիւն մը տեղի պիտի չունենայ Գերմանիոյ բռնած քաղաքական ընթացքի մէջ։ Կը հաստատուի թէ յունիս ամսոյ մէջ Քաբրիվի, Քաշնոքի և Քրիսբի կարևոր տեսակցութիւն մը պիտի ունենան։

Գաղղիա։ — Նախագահին Գարնոյի ըրած ճանապարհորդութիւնը այժմ զբաղեցուցեր է զԳաղղիա։ Նախագահը այցելած ամէն քաղաքաց մէջ մեծ ընդունելութիւն գտաւ մանաւանդ 'ի Դուլոն։

digitised by A.R.A.R.@